լիզի հայ քահանաների միջոցով վիրախոս վայրերում պահուոզ գպրոցներին՝ 500 ռ.։ գ) Թիֆլիզի Հայոց Բարեգործական Ընկերութեան՝ 500 ռ.։ ե) Աղէքսանդրապոլի Հայոց Բարեգործական Ընկերութեան՝ 300 ռ.։ զ) Հայ օրիորդների Կոմիտէի որբանոցին՝ 200 ռ.։ է) Ռուսաց Կարմիր Խաչի Ընկերութեան՝ 200 ռ.։ ը) «Մեղուս» Ընկերութեան՝ 200 ռ.։ թ) Թիֆլիզի հայ քահանաների ապահովութեան գանձարանի Վարչութեան՝ 200 ռ. ե. ժ) Մի քանի այլ բարեգործական նպատակներով յատկացրած 2750 ռ.։ ընդամենը վեց հազար ինն հարիւր յիսուն (6950) ռուբլի։ 30 յունուարի։ թ. 193։

Նորին Օրրութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Ախալցխայի Հայոց Հոգևոր Կառավարութեան փոխադրած յօգուտ գաղթականների տասն ռուբ. 03 կոպ. (10 ռ. 03 կ.)։ 31 յունուարի։ թ. 195։

Նորին Օրրութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Ամերիկայից փոխադրած Թիֆլիզից պ. Մակալբմի ձեռքով յօգուտ գաղթականների շորս հազար հինգ հարիւր (4500) ռուբլի։ 31 յունուարի։ թ. 196։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԳԱՐԳԵՒԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Շուշու Մեղրեցոց եկեղեցու Խորէն քահանայ Խոկանդարեանի անունով որով բան միջնորդութեան թեմի ժամանակաւոր Կառավարիչ Տ. Վահան Ծ. վարդապետի շնորհուեցաւ աւագ քահանայութեան պատիւ։ 12 յունուարի։ թ. 56։

Կոնդակ Զանգեզուրի գաւառի Խնձորեսկ գիւղի Յարութիւն քահանայ Տէր Մարտիրոսեանի անունով որով Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի միջնորդութեան համաձայն։ շնորհուեցաւ քահանայական լանջախաչ կրելու իրաւունք։ 13 յունուարի։ թ. 58։